

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ԲԱՌԱՐՄԱՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Գ. Վ.

Հայերենի անհայտ ծագման բառարմատների ուսումնասիրությունը հայոց լեզվի ստուգաբանության առանցքային խնդիրներից է, որին անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ, այդ թվում՝ Հ. Աճառյանը, Գ. Զահուկյանը, Գ. Ղափանցյանը և այլք: Ըստ Հ. Աճառյանի, «Հայերեն արմատական բառարանում» տեղ գտած 10996 արմատներից միայն 927-ն ունեն հնդեվրոպական ծագում, մինչդեռ անհայտ ծագման արմատների թիվը հասնում է 3680-ի: Այդ բառերի մեծագույն մասին Հ. Աճառյանը հակված է վերագրելու ուրարտական ծագում: Ըստ Գ. Ղափանցյանի, հայերենի հնդեվրոպական ծագման բառերի թիվը ընդհանուր բառապաշարի 10%-ից ավելին չէ: Գ. Ղափանցյանը բնիկ է համարել հայերենի բառապաշարի ոչ հնդեվրոպական (ասիական) շերտը (փոխառությունները չհաշված):

Գ. Զահուկյանը ևս այն կարծիքին է, որ անհայտ ծագման արմատները հայերենի բառապաշարի մեջ խիստ պատկառելի թիվ են կազմում: Նա նշում է, որ դժվար բացատրելի է այն հանգամանքը, որ «Հայերենի չստուգաբանված անհայտ ծագման բառարմատները մոտավոր հաշվումներով կազմում են բառարմատների ընդհանուր թվի առնվազն կեսը, եթե ոչ կեսից ավելին: ...Սա հիմք է տվել հայերենի վերաբերյալ ամենատարբեր եզրակացություններ կատարելու ընդհուպ մինչև նրա հնդեվրոպական բնույթը կասկածի տակ առնելը»¹: Զահուկյանն իրավամբ նշում է, որ հայերենը հնդեվրոպական կենդանի լեզուներից ամենաառեղծվածայինն է:

Գ. Զահուկյանի կարծիքով, ծագումնաբանական եզրակացությունների համար հարկավոր է նկատի ունենալ բառերի հատկապես հնագույն շերտը: Նա նշում է, որ ամենից ավելի գործածական բառերի (նաև բարբառային) իր կազմած ցուցակն ընդգրկում է շուրջ 1500 բառարմատ:

Հայերենի «անհայտ ծագման» բառերի ծագումնաբանական բնույթը պարզելու համար Գ. Զահուկյանը մատնանշում է մեթոդական մի քանի սկզբունք:

Առաջինը այդ բառերի համեմատությունն է ընդհանուր նոստրատիկ բնույթի վերականգնված ձևերի հետ: **Երկրորդը**, որ կիրառել են Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը, հետևյալն է ի մի բերել հայերենի, վրացերենի և կովկասյան այլ լեզուների համար

¹ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 602:

² Капанцян Г. К происхождению армянского языка (Историко-лингвистические работы, т. 2, Е., 1975, с. 233).

³ Զահուկյան Գ., Հայերենի անհայտ ծագման բառարմատները [Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊՀ), 1990, № 2, էջ 62-77]:

այն ընդհանուր բառերը, որոնք որոշակի նկատառումներով չի կարելի բխեցնել միմյանցից, այսինքն՝ ենթադրվում է մի երրորդ անձանիթ աղբյուր: Հ. Աճառյանն այդպիսի աղբյուր է համարել ուրարտեբներ: **Երրորդով** հնարավոր է առանձնացնել Հայերենի բառապաշարի այն շերտը, որն ունի Հայոց լեզվի բուն օրինակափոխություններից շեղվող հնդեվրոպական զուգահեռներ. դա կարտարել է Գ. Զահուկյանը «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ուրվագծեր» գրքում: **Չորրորդ** ուրարտեբների հետ համեմատել Հայերենի այն արմատները, որոնք ունեն ուրարտեբների ածանցներին համարժեք վերջավորություններ:

Կարծում ենք, վերջին երկուսից կարելի է այլևս հրաժարվել Հաչվի առնելով այն հանգամանքը, որ այսպես կոչված «ուրարտեբների» գոյությունը վաղուց արդեն կասկածի տակ են առել մի շարք ուսումնասիրողներ: Գ. Զահուկյանը ևս, քննելով ուրարտական մի քանի արձանագրություններ, կարծիք է հայտնել, թե դրանք հնագույն Հայերենով են գրված⁵: Ներկայումս առավել հեռանկարային է թվում առաջին սկզբունքի կիրառումը, սակայն մեկ ճշգրտումով: Հայերենի արմատները ցանկալի է համեմատել ոչ թե կամ ոչ միայն նոստրատիկ նախալեզվի վերականգնված ձևերի, այլև նոստրատիկ մակրոընտանիքը ներկայացնող առանձին լեզվաընտանիքների լեզուների արմատների հետ: Դրանցից է նաև կովկասյան կամ քարթվելական լեզվաընտանիքը, որը նախկինում ևս մեր լեզվաբանների համար քննության նյութ է եղել, և համեմատություններ միշտ էլ կատարվել են, սակայն Հայերեն բառերի ծագման աղբյուրը սովորաբար համարվել են կովկասյան լեզուները կամ մի ինչ-որ «անհայտ լեզու»: Հայերենի գրեթե այն բոլոր բառերը, որոնք զուգահեռներ ունեն կովկասյան լեզուներում, համարվել են կովկասյան փոխառություն: Մի շարք բառարմատների վերլուծությունը, սակայն, ցույց է տվել, որ Հայերենի և կովկասյան լեզուների համար ընդհանուր բոլոր բառերը կովկասյան համարելու օգտին բերված փաստարկները համոզիչ չեն⁶:

Հայերենի անհայտ ծագման բառարմատները անհրաժեշտ է համեմատել նոստրատիկ ընդհանրությունը ներկայացնող բոլոր հնարավոր լեզուների հետ նաև մեկ այլ պատճառով: Օտար լեզվաբանների կողմից Հայերենի բառային և քերականական նյութն այսօր ևս ընդգրկվում է հետազոտությունների մեջ, սակայն օգտագործվում է միայն Հայերենի հնդեվրոպական համարվող շերտը, այսինքն՝ բառապաշարի մի զգալի մասը ուսումնասիրությունից դուրս է մնում: Պատճառն այն է, որ Հայերենը համեմատվում է այլ լեզվաընտանիքների լեզուների հետ՝ իբրև հնդեվրո-

* Джаукян Г. Очерки по истории письменного периода армянского языка, Е., 1967.

⁵ Զահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր Հայկական բնույթի մասին (ՊՐՀ, 2000, № 1, էջ 124-129):

Նիկողոսյան Գ., Հայերենի կովկասյան փոխառությունների հարցի շուրջ (Բանբեր Երևանի համալսարանի, 2008, № 3, էջ 156-163):

պական լեզու: Սակայն հնարավոր է, որ հենց հ.-ի լեզվաբնականիքի շրջանակից դուրս պետք է փնտրել հայոց լեզվի առեղծվածային որոշ երևույթների բացատրությունը: Մեծ նշանակություն կարող է ունենալ հայերենի բառային նյութի համեմատությունը նախապես նոստրատիկ մակրոընտանիքի հիմնական կորիզը կազմող վեց լեզվաբնականիքների սովյաների հետ (հնդեվրոպականից բացի սեմա-քամյան, քարթվեական, ուրալյան, դրավիդյան, ալթայյան):

Հայերենի անհայտ ծագման բառարմատները անհրաժեշտ է համեմատել նաև հ.-ի լեզուների այն արմատների հետ, որոնք ինչ-ինչ պատճառներով հայ և օտար լեզվաբանների ուշադրությունից վրիպել են: Ելնելով հ.-ի մի շարք լեզուների բառապաշարի քննությունից, որը հնարավոր է ներկայացնել մեկ հոդվածում, հարկ ենք համարում նշել, որ ընդունված այն տեսակետը, թե հայերենի բառարմատների միայն մի փոքր մասն ընդհանուր զուգահեռներ ունի հ.-ի. այլ լեզուներում, չի համապատասխանում իրականությունը: Խնդիրը համեմատության մեթոդները և սկզբունքներն են:

Օրինակ, անտեսվել են հայերեն այգ, կէզ, կէս, կոտոր, կուրտ, կոփ, կրակ «անհայտ ծագման» կամ հ.-ի. ծագման գին, գիր, գուլ, գործ և այլ արմատների բազմաթիվ համարժեք ձևեր հ.-ի. այլ լեզուներում այն պարզ պատճառով, որ ըստ հնչյունական օրենքի՝ հայերենի կ խուլ պայթականին հ.-ի. այլ լեզուներում համապատասխանում է ձայնեղ պայթական, իսկ հայերենի գ ձայնեղին համարժեք է այլ լեզուների շրթնային v/w (չփական կամ ձայնորդ): Այսպիսով, ստացվում է, որ սանս. अग्नि [agni] «կրակ», հուն. αἶψα «փայլ, ցերեկվա լույս», չվեդ. ugn «վառարան», ռուս. огонь բառերը կապ չունեն հայերեն այգ արմատի հետ: Նույնը վերաբերում է բազմաթիվ այլ արմատների. գետ - լատին. gutta, ae «կաթիլ», օս. kada «գետակ, առու», չվեդ. gūta «լցնել, ջրել», ընդունված (հ.-ի. նախաձևն է՝ *vedo-), գիր - սանս. किरक [kiraka] «գրող, տարեգիր», լատ. scribere «գրել», հուն. γραφω «քերծել, փորագրել, գրել», (հ.-ի. *wer), գուլ/գաղջ - իսլ. glæða «վառել, չիկացնել», նորվ. glo «կրակ», գերմ. glühen «վառվել, այրվել», Glut «տաքություն, բոց», անգլ. glow «վառվել», իռլ. gal «տաքություն», լատին. calor, (հ.-ի. *wel-), գործ - սանս. कर् [kar] «անել, կատարել», कृत [kritā] «արված», հինդի करना [karnā] «անել», कर्तार [kartar] «արարիչ», պրս. kardan «անել», չվեդ. gora «գործ», gjord «արված», նորվ. gore «անել», իսլ. gerð «արարք», (հ.-ի. *vorg-), կապ - չվեդ. kapa «հափշտակել», նորվ. kapsun «սանձ», լատին. capio, ere «վերցնել, բռնել, գերել», captus, captivus «գերի», կոտոր - լատ. caedo, ere «կոտորել, սպանել, հատել», սանս. खट [k'at] «բաժանել, կոտրել», घात [g'hāta]. «հարված, սպանություն», հինդի काटना [kāṭnā], कतरना [katarnā] «կտրել, հատել, ձևել», कटनी [kaṭnī] «դանակ, մանգաղ»,

कतरनी [katarñi] «մկրատ», कटार [katār] «դաշուլ», कतरा [katarā] «կտոր, բեկոր», և այլն⁷:

Վարելի ասել, որ լեզվական օրենքը առաջ է ընկել բառաքնական հետազոտություններից:

Մենք անդրադարձել ենք Հայերենի անհայտ ծագման մի շարք բառարմատների և ուրալյան լեզվաընտանիքի մեկ ճյուղի՝ ֆիննա-ուգրական (ֆ.-ու.) լեզուների տվյալների համեմատությունը բերելով նաև այդ արմատների մեր հայտնաբերած Հ.-հ. զուգահեռները, որոնք ստուգաբանության տեսակետից կարող են հետաքրքրություն ներկայացնել:

Ինչպես ցույց է տալիս ստորև բերված բառարմատների քննությունը, մեկ լեզվում ծայնավորով սկսվող բաղամիջ բառերի զուգահեռները այլ լեզուներում հետնալեզվային կամ կոկորդային բաղամայններով են սկսվում: Սա զարմանալի է, եթե նկատի առնենք, որ նոստրատիկ նախալեզվում, ինչպես նաև նախահնդեվրոպական լեզվում ծայնավորով սկսվող բառեր չեն եղել, այսինքն՝ բաղամայնը հետագայում ընկել է⁸: Բաղամայնն ընկնելուց առաջ կարող էր չլրթնայնանալ կամ քմայնանալ, որի հետևանքով բաղամայնի անկումից հետո բառասկզբում մնում էր չլրթնային ծայնորդ (w) կամ չլրթնատամնային չփական (v), կամ էլ քմային ծայնորդ (y)⁹: Հնչյունների անկումն անընդհատ գործընթաց է, և ծայնավորի անկումից հետո բառը դարձյալ կարող է սկսվել բաղամայնով այս անգամ ծայնավորին հաջորդող բաղամայնով, օրինակ՝ հայ. եղեամն > ֆինն., էստ. lumi «ձյուն», հայ. արշալոյս > ֆինն. ruso «արշալոյս», ռուս. русский, խեթ. henkan «մազ» > nakkuš «կորուստ, վնաս», լատին. neco, āre «սպանել, խեղ-գել», հուն. νεκος «դիակ», հայ. եղ, եղանել > լիներ, ֆինն. ankeus «ծանրություն» > nakata «նետել», մար. аҥгалташ «հենվել» > կոմի-պերմ. һёкравыи «թեքել, ծռել», հայ. արդեն > շվեդ. redan «արդեն», անգլ. ready «պատրաստ», հայ. արեգ, խեթ. harki-/hargai- «սպիտակ, պայծառ», սանս. हरिण [harina] «արև», > հունգ. reggel «առավոտ», հայ. արեւ > սանս. रवि [ravi]¹⁰ «արև», ֆինն. elaa

⁷ Նիկողոսյան Գ., Հայերենի մի շարք արմատների ստուգաբանական վերլուծություն (հետնալեզվային բաղամայնների հերթագայությունը արմատներ) (Կանթեղ, 2015, № 2, էջ 43-56):

⁸ Bomhard A. R. A Comprehensive Introduction to Nostratic Comparative Linguistics, Vol. 1, Charleston, SC, 2014, p. 99. Սկզբնապես բառի սկզբում չի եղել նաև բաղամայնների կուտակում, որը բնորոշ է շատ հնդեվրոպական լեզուների, այսինքն՝ այբլիսի արմատները ևս նախնական չեն:

⁹ Նիկողոսյան Գ., Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների տիպաբանական համեմատության ուրվագծեր (ՊԲՀ, Ե., 2008, № 1, էջ 259-274):

¹⁰ Խեթերենի և սանսկրիտի օրինակները ցույց են տալիս, որ կոկորդայինը, այնուհետև նաև ծայնավորն ընկել են, հակառակ ընդունված կարծիքի, թե սանս. रवि [ravi] ձևն ալելի հին է:

«ապրել», olla «լինել» > lienne (olla օժ. բայի ձևերից մեկը), հունգ. elni «ապրել» > lenni «զառնալ, լինել, գոյություն ունենալ», մար. илаш/ ылаш «ապրել, բնակվել», улаш/ылаш «լինել» > лиаш/лияш «լինել»:

Նկատի է առնված արմատը ներկայացնող ծագումնաբանական փնջերում փոփոխականների գոյությունը՝ հետնալեզվային և կոկորդային /k/g/gh/k/g/gh/'g'/gh/'H/w/y/Ø/, ատամնային /t/th/d/dh/ð/s/ts/tz/dz/ և շրթնային /p/ph/b/bh/m/v/f/ հնչյունների հերթագայությունը: Աշխարհի շատ, մասնավորապես ֆիննաուգրական լեզուներում առկա ըստ արտասանության տեղի նույնական բաղաձայնների հերթագայությունը, որը հաճախ արտահայտված է միևնույն արմատի հարացույցի ձևերում, հուշում է այն միտքը, որ որևէ լեզվի հնագույն շրջանում դա կարող էր տեղի ունենալ, իսկ արմատի փոփոխակները հետագայում կարող էին ինքնուրույն արմատի արժեք ձեռք բերել:

Բաղաձայնների հերթագայությունն առկա է և Հայերենում, օրինակ ատամնային բաղաձայնների դեպքում՝ տառանք/ծածանք/սասանք, տոփեմ/դոփեմ/ծեփեմ, թոր/ծոր/սոր, թաւալ-տապալ-ծաւալ-, շրթնային բաղաձայններով փոփոխակներ փայլ/փողփող-/պաղ/բալ, պատ/փաթ, հետնալեզվային և կոկորդային բաղաձայններով փոփոխակներ կեղ-/խեղ/ շեղ/շիլ, խուղ/հիւղ/, հոլիկ/քոլիկ, կեղեւ/ խեղեփ, կոփ/խոփ/ոփ, խեղդ-/հեղձ-, կափ-/խափ-¹⁰:

Ֆիննաուգրական լեզուներում ատամնային բաղաձայնների (t~d~s) լծորդության օրինակներ են՝ ֆինն. nysi, կոմի нод, нуд, нлрм. ныд, մորդվ. недь, խանտ. ныт «բռնակ, կոթ», ֆինն. suoni, կոմի, ուղմ. сон, մորդվ. сан, մար. шун, сюн, խանտ. тох, մանս. тох, тын, тээн «երակ, ջիղ» և այլն: T~d~s հերթագայությունը առկա է նաև միևնույն արմատի տարբեր ձևերում՝ ֆինն. kasi «ձեռք» - katenä «ձեռքով», murtaa «ջարդել»-mursi «ջարդում էր», vesi/veden (սեռ. հ.) «ջուր», lehti/lehden «տերև» susi/sudden/sutta «գայլ», էստ. hunt/hundi «գայլ», koiit/koidu «արևածագ»: Շրթնային բաղաձայնների (p~v~b~m) լծորդության օրինակներ են՝ ֆինն. levätä «հանգստանալ» - lepaan «հանգստանում եմ», juopua «արբել» - juoma «խմիչք», leipä/leivän «հաց», էստ. iive/iibe «աճ», kimp/kimbu «կապ, խուրձ», leib/leiva «հաց», orb/orvu «որբ», talb/talva «սեպ», tiib/tiiva «թև»: Հետնալեզվային բաղաձայնների (k~h~g~j~Ø) լծորդության օրինակներ են՝ ֆինն. kanki (սեռ. հ. kangen) «փայտ, ձող», henki/hengen «օդ, կյանք, հոգի», väki/väen «ժողովուրդ», էստ. hulk/ hulga (սեռ. հ.) «քանակ, բազմություն», jõgi/jõe «գետ», jõuk/jõugu «ամբոխ», nago/ náo «ղեմք», külg/ külje «կողք, կողմ», leek/leegi «բոց»:

¹⁰ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 298:

Հայերենի ձայնեղ բաղաձայնների դիմաց ֆիններենում և էստոներենում գտնում ենք միայն խուլ բաղաձայններ: Չայնեղները այդ լեզուներում հանդիպում են միայն հարացույցի որոշ ձևերում և երբեք՝ բառակազմում:

Հայ-ֆիննա-ուգրական զուգագիպումների դեպքում հայերենում ատամնային բաղաձայնների շարքին ավելանում են նաև թ շնչեղ խուլը, ծ և ձ հպաշփականները (ը/թ/տ/ձ/ծ):

Ո ձայնավորով սկսվող բառերի զուգահեռները մեծ մասամբ բառակազմում ունեն *w/v/f*: Կոկորդայիների շրթնայնացման դեպքում առաջացել են նաև *h-w/v* տարբերակվածություններ արմատներ:

Ուղղորթյան է արժանի այն փաստը, որ հայերեն *ե* և *ո* ձայնավորներով սկսվող բառերը ցեղակից լեզուներում ունեն ոչ միայն պարզ է և *o* հնչյուններով, այլև *j, w, v, f, p, b* հնչյուններով սկսվող զուգահեռներ, որոնք բավական մեծ թիվ են կազմում: Հայերեն *ե-ի* դիմաց այլ լեզուներում գտնում ենք *ye*, իսկ հայերեն *ո-ի*՝ *vo* (*vo*): Օրինակ՝ հայ. եղն-ռուս. елѣнь, հայ. եղևին-ռուս. ель, հայ. եթե - սանս. yadi, հ. ռուս. еда «եթե», հայ. ոգել-լատ. vocare, սանս. vakti «խոսք, ճառ», հայ. ոյծ «պաղ, ցուրտ» - օս. wazal «սառը, ցուրտ», հայ. որոջ - օս. vārig, հայ. ոգնի - օս. wzyzn, հայ. ոստին - իսլ. visinn «թառամած, չոր», հայ. ոստայն - իսլ. festi «պարան, շղթա»: Պարզ է, որ *ե* և *ո* հնչյունների տարբերակված արտասանությունը (երկբարբառային և պարզ ձայնավոր) գալիս է հայերենի հնագույն շրջանից¹¹:

Հայերենի *ո* հնչյունով սկսվող արմատներից շատերը *հ.-ե.* այլ լեզուներում ունեն կամ ունեցել են նաև կոկորդային հնչյուններով սկսվող տարբերակներ, ինչպես հայերենում՝ հոլով ~ ոլոր, հեռ ~ ոտ, հեղեղ ~ ողող, հորթ ~ որթ, հոգի ~ ոգի: Ըստ էության, շրթնայնացել է ոչ թե *o* ձայնավորը [^ho], այլ նրան նախորդող կոկորդայինը [^ho]: Հ. անգլ. hwēol «անիվ» (ն.անգլ. wheel), իսլ. hvel, ձևերը, թերևս, բացատրում են հայերենի հոլով ~ ոլոր տարբերակները, իսկ իսլ. hjol, շվեդ. hjul ձևերը՝ ռուս. юла-ն, նույն կերպ՝ հ.անգլ. hwa «ոպ», դան. hvo [vo'] ~ հայ. ո «ոպ», հայ. որ - գերմ. wer «ոպ», դան. hver «յուրաքանչյուրը» և այլն:

Հայերենի ոլոր արմատին համապատասխանում են՝ լատ. volvo, ere, սանս. [val] «շրջվել, դառնալ», [valana] «պտույտ», ռուս. вал «ալիք», հբգ. wellan, իսլ. vella «գլորել, գլորվել». հայ ողողել-լատիշ. valgums «խոնավություն», ռուս. влага, անգլ. flood «ջրհեղեղ», նաև ողող «լաց» իմաստով՝ իսլ. vol, væl «լաց», vola, væla «լալ», հայ. վայթել/ոթել - իսլ. væta «թրջել, անձրև, հեղուկ», votna «թրթրվել», անգլ. water, ռուս. вода:

¹¹ Նիկողոսյան Գ., Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների..., էջ 259-274:

Հայերենում որոշ բառերում գոյություն ունեցող արմատի տարբերակվածության պարագայում (հես>ոտ, հոգի>ոգի, հորթ>որթ, հոլ/հոլով>ոլոր, հեղեղ>ողող), թերևս, հ-ով սկսվող տարբերակները պետք է առաջնային համարել այնպես, ինչպես դրանք առաջնային են հետևյալ բարբառային ձևերի համեմատ հոգ>ֆոգ/վըղ, հոգի>ֆոքի, հոն>ֆոն, հորթ>ֆորթ, և այլն (հնչյունափոխության ընթացքը հորթ>հորթ>որթ>վորթ/ֆորթ):

Ստորև բերված են Հայերենի անհայտ ծագման 50 բառարմատներ: Որոշ արմատներ տրված են ծագումնաբանական փնջով, օրինակ, Հանգ «ղաղաք»/†անկ, որտեղ արմատներից մեկը ստուգաբանված հ.-ե. արմատ է:

1. այս «քամի» - հ.-ե. լատիշ. *gaiss* «քամի», անգլ. *ghost* «ուրվական».

Ֆ.-ու. ֆինն. *haisu* «գարշահոտություն», *haistaa* «հոտ քաշել», էստ. *hais* «գարշահոտություն», *haistama* «հոտ քաշել», կոմի ис «հոտառություն», исаvны «հոտ քաշել».

2. այր «մարդ» - հ.-ե. իսլ. *herra* «տեր, պարոն», *jarl* «իշխան», *halur* «բնստ. մարդ, այր մարդ», նորվ. *kar* «այր մարդ», հ. անգլ. *ar* «սուրհանդակ, ծառա, առաքյալ», անգլ. *earl* «կոմս», լատին. *erus*, *herus* «տեր».

Ֆ.-ու. հունգ. *úr* «պարոն, տեր», կոմի кыр «որձ», ուզմ. эр, эрвал «զամբիկ, մատակ, кобыла», մար. эргаш «տղա, երեխա», эрге «որդի», էրզյան. альне «տալգր, տղամարդ», аля «տղամարդ, ավագ տալգր», մոկչան. аля «հայր, տղամարդ» (*r-l* լծորդություն¹²).

3. աստուած - հ.-ե. իսլ. *austur*, հ. անգլ. *east*, *eastan*, չվեդ. *öst*, նորվ. *öst* «արևելք», լատին. *est*, գերմ. *ist*, ռուս. есть «լինել բայի եզ. 3-րդ դեմք» (քերականացում).

Ֆ.-ու. հունգ. *isten* «աստված», *est* «երեկո», ուզմ. *uam* «միթե, ли», էրզ. *истя* «այսպես, այսպիսով», *истямо* «այսպիսի», *аштемс* «գտնվել, լինել, կանգնել», *аштема* «գտնվելը», մար. *ышташ* «անել, կատարել, ստեղծել, աշխատել», *ышталаш* «կատարվել, առաջանալ, ստեղծվել, կառուցվել», *ыштыш* «աշխատանք, գործ».

4. արշալոյս/Օարուսեակ - հ.-ե. սանս. अरुष[arusa] «արև, օր, կրակ, բոց, արևածագ», औषसी [ausasi] «առավոտ, արևածագ», रश्मि [raçmi] «ճառագայթ», रश्मिवन्त[raçmivant] «փայլուն, շողացող, արեգակ», լատիշ. *ausma*, *rūsa* «արշալոյս», լիտվ. *ausra* «լուսաբաց», *aušti* «լուսանալ», *aušanti* «լուսաբացին», *ryškus* «պարզ, պայծառ».

¹² Նիկողոսյան Գ., Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ (Կանթեղ, Ե., 2010, № 1, էջ 86-95):

Ֆ.-ու. ֆինն. *rusko* «արշալույս, շառագույն», *ruso* «արշալույս», *ruskea* «շագանակագույն», հրգ. *ашо* «սպիտակ, սպիտակուց», մոկչ. *акша* «սպիտակ», մար. *ошо ошо* «սպիտակ».

5. արքայ - հ.-բ. սանս. *राजन्* [*rājan*] «արքա», հինդի *राजा* [*rājā*] «արքա», *राजा* [*rājya*] «թագավորություն», հուն. *αρχω* «առաջնորդել, կառավարել», լատին. *rex, regis* «արքա, արքայազն», *regno, āre* «թագավորել», չվեդ. *riko* «պետություն, թագավորություն», իսլ. *riki* «պետություն, թագավորություն, իշխանություն», *rekkrur* «րնստ. տղամարդ, հերոս», գերմ. *Reich* «կայսրություն».

6. բռն - հ.-բ. սանս. *बुमि* [*b' ūmi*] «հող, երկիր, տեղ», նորվ. չվեդ. *bo* «տուն, կացարան, թռչնի բույն», նորվ. *bu* «տնակ, խրճիթ», *bo* «դաստակերտ».

Ֆ.-ու. հրգ. *бѣ* «ցեղ, բնակավայր գյուղ», *бѣ* «ցանկապատված տարածք, սահման».

7. եղեամն /+կաղաւել - հ.-բ. հուն. *κρύος* «սառնամանիք», լատին. *gelo, āre* «սառեցնել», *gelidus* «սառը», *glacio, āre* «սառեցնել», հանգլ. *celan* «սառչել», *cielo* «ցուրտ», *ciele* «զովություն», *hrim* «եղյամ» (> ն.անգլ. *rime*), ն. անգլ. *cold, գերմ. kalt* «ցուրտ», *Reif* «եղյամ», հ. իսլ. *kala* «սառչել», իսլ. *kyla/kæla* «ցուրտ», *hela* [*jela*], *hrim*[*rim*] «եղյամ», նորվ. *hèle* «եղյամ», դան. *kole* «սառեցնել», *ou. xalas/kyrs* «եղյամ», ռուս. *холод/хлад-, колетъ* «սառչել».

Ֆ.-ու. ֆինն. *halla* «սառնամանիք», *kolea, kylmä* «սառը», /*kylmä kesa-* ցուրտ ամառ/, *kuura, huurre, harmä* «եղյամ», *haalea* «զով», *lumi* «ձյուն», *luminen* «սառած», հստ. *külm* «սառը» ցուրտ», *külmuma* «սառչել», *harm* «եղյամ», *hall* «սառնամանիք», *lumi* «ձյուն», հունգ. *harmat* «եղյամ», *hülmi* «սառչել», *lom* «ձյուն», կոմի *гѣор* «եղյամ», *лым* «ձյուն», *ѣлк* «սառած», կոմի-պերմ. *куржава* «եղյամ», ռուս. *гѣор* «եղյամ», *лымы* «ձյուն», մար. *рүн* «եղյամ», *лум/лым* «ձյուն», *кылмаш* «սառչել», *кылме* «սառած», հրգ. *кельме* «սառնամանիք, ցուրտ», *кельмемс* «սառչել», *лов* «ձյուն», մոկչ. *кельмот* «սառնամանիք», *кельмомс* «սառչել», խանտ. *kelä* «ցող».

8. եղ-եռն/խեղդխողխող/կեղ - հ.-բ. հուն. *κηλς, ιδος* «մազ, ոչնչացում», լիտվ. *galas* «մազ», հ. անգլ. *cwellan* «սպանել», ն. անգլ. *quell* «ճնշել», *kill* «սպանել», իսլ. *hel* «մազ» (*i hel* «մազացու»), նորվ. *kola* «մեռնել» (*i hjel* «մազացու»), *helhud* «րնստ. մաշվան բոթաբեր», չվեդ. *kola* «մեռնել» (*i hjall* «մազացու»), խեթ. *hulle- / hull-* «ջախջախել, ոչնչացնել», Ջազ. խողխողել (խեղդ-հեղդ-) -

հուն. *ολεω* «ոչնչացնել», *ολλυμι* «սպանել», լատին. *ob-oleō, -ēre* «ոչնչացնել», խեթ. *hulhulia-* «կովել», (Հ.-ե. * *ol-* «ոչնչացնել») ¹³.

Ֆ.-ու. ֆինն. *kuolla* «մեռնել», *kalma, kuolo, kuolema* «մահ», հունգ. *halni* «մեռնել», *halal* «մահ», *olni* «սպանել», *ölés* «սպանություն», կոմի *кувны* «մեռնել», *кулом* «մահ», ուզբ. *кулыны* «մեռնել», *кулон* «մահ», *кулэм* «մեռած», մար. *колаш* «մեռնել», էրզ. *куломс* «մեռնել», *кулома* «մահ», *куловтомс* «մեռցնել», *кулозь* «մեռած», մոկշ. *кула* «մեռած», մանս. *холухкве* «վերջանալ, մահանալ», *холал* «վախճան», *алухкве* սպանել «/կենդանի/».

9. Թափ/տոփել/թափանց-/սթափ-Հ.-ե. իսլ. *töpun* (հոգն. *tapanir*) «կորուստ», *tapa* «կորցնել, զրկվել», *tap* «ուժ, եռանդ», *steypra* «լցնել, թափել», *steyppiregn* «հորդառատ անձրև», նորվ. *støpe* «ծուլել, թափել», *tap* «կորուստ», *tape* «կորցնել», *tapp* «ծորակ», *tappe* «լցնել», չվեգ. *tappa* «վայր գցել, կորցնել», անգլ. *tap* «ծորակ».

Ֆ.-ու. ֆինն. *tippa* «կաթիլ», *tippa* «կաթել», էստ. *sarutama* «թափ տալ», *tiba* «կաթիլ», էրզ. *тапавкс* «բեկոր», *тапавомс* «ջարդվել», *тапазь* «ջարդած, փշրած», *тапамс* «կոտրել», *тапаозь* «կոտրած», *тапсемс* «կոտրել (անկա)», մար. *тапката* «հաղթանակ» (Հմմտ. Հայ. թափով), *тапташ* «կոփել», *тапнаш* «ընկնել».

10. Թեւ /թե-թեւ - Հ.-ե. արմատներից թերևս միայն խեթ. *tapuš-* «կողմ» և *tāpuasš* «կող».

Ֆ.-ու. ֆինն. *siipi* (հոգն. *siivet*) «թև», էստ. *tii/b, -va* «թև», *tiibu sarutama* «թևերը թափահարել», *tiibhoone* «կողաշենք», *tiivuline* «թևավոր», կոմի *тыб, нлқмнрм. тылы, «փետուր», մանս. таул, тоол, туул, հունգար. toll, սաամ. долге, толке.*

11. Թոք-տես՝ թեւ, Ֆ.-ուգր. կոմի *ты²* «թոք, թոքեր» (=թե-թեւ), ուզբ. *ты²* «թոք», մոկշ. *тевлав, -афт, ֆինն. tavy, täky, taty, էստ. tävi, tävü* «թոք», լիվ. *tä u, հունգ. tüdő*: Ֆ.-ուգր. արմատը համարվում է ուրալյան ընդհանրությունից եկող, քանի որ զանազան ձևափոխություններով այն առկա է նաև ուրալյան մեծ լեզվաընտանիքի մյուս սամոգիական ճյուղի լեզուներում: Հ. Աճառյանը նշում է, որ շատ լեզուներում **թոք** բառը ածանցված է **թեթեւ**-ից, օրինակ *легкие, անգլ. lights, պորտ. leves, գերմ. Lunge, lunga* «թոք» (Հ.բ.գ. *lungar* «թեթեւ»), սակայն գտնում է, որ **թոք** և **թեթեւ** դժվար է կապել միմյանց հետ: Ֆ.-ուգր. գուգահեռները կարող են որոշակի լույս սփռել այս բառի ստուգաբանության վրա, մասնավորապես ենթադրելի է, որ **թոք** բառում -ք հնչյունը հոգնակիի վերջավորու-

¹³ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 271.

¹⁴ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Հ. 2, Ե., 1973:

թյուն է, որն այլևս չի ընկալվում որպես այդպիսին: Թ.-ուգր. օրինակներն ըստ Բ. Կոլինդերի ուրալյան նախալեզվից են¹⁵:

12. Թռռ, Թոր, Թուրմ, Թուրջ, Թրել – Հ.-ե. իսլ. tar «արցունք, կաթիլ», drekka «խմել», þjor «արեցողություն», tjörn «լիճ», straumur «հոսանք», streyma «հոսել», շվեդ. tar «արցունք», ström «գետ, հոսանք», գերմ. Träne «արցունք», Strom «մեծ գետ, հեղեղ», հանգլ. tear «կաթիլ», ն. անգլ. tear «արցունք», լատիշ. strava «չիթ, հոսանք», ռուս. струя «չիթ».

Փ.-ու. ֆինն. tiristä «ծորակ», tirahtaa «կաթեցնել», էստ. tursumma «ուռել, փքվել», tursumine «փքվածություն», turrutama «թրջել», ուրմ. торзыны «ուռել, խեղդվել», тордыны «ուռել», тыраз «լիբր», тырмытыны «լցնել», тырмыны «լցվել», торманы «ուռել», торнам «ուռուցք», тӧрһан «այտուց», էրզ. тородемс «լցնել, քամել», тородевемс «ուռել, լցնել, հոսել», тородезь «ուռած, քամած», тороземемс «ուռել» (տոգել¹⁶).

13. Թուխ¹ «սև» – Հ.-ե. իսլ. dokkur «մութ», Հ.բ.գ. lunkal, գերմ. dunkel «մութ, մուգ», խեթ. dankui- «սև, մուգ, մութ», սեպ.-լուվ. dakkui – «մուգ, մութ», իսլ. dokkur «մութ», dokkua «մթնել».

Փ.-ու. ֆինն. tuhka «մոխիր», tuhlata «վատնել», tuho «վնաս, կորուստ», tuhola «ոչնչացնել», tuhrata «կեղտոտել», էստ. tuhane «մոխրագույն», tuhk «մոխիր», tuhkur «գորշաճերմակ».

14. Թուխ² «հաց փփել» – Եթե բառի բուն նշանակությունն է «զարնել», ապա այն կապվում է հայերենի թակ և Հ.-ե. հետևյալ արմատների հետ՝ իսլ. deig «խմոր», շվեդ. deg «խմոր», tag «հարված», նորվ. deig «խմոր», takk «հարված», Հ. անգլ. daege («կին») հացթուխ, ն. անգլ. dough «խմոր», գերմ. Teig «խմոր», խեթ. tuhš- «կտրել, անջատել», tuhhiš- «անջատվել», tuhhuš- «վերջանալ».

15. Իմանալ – Հ.-ե. սանս. मन् [man] «իմանալ, մտածել», मनस [manas] «հոգի, միտք, բանականություն», հինդի मानना [mānā] «կարծել, ենթադրել», հուն. μαρῶναι «սովորել, իմանալ, հասկանալ», μάντις «գուշակ», լատին. mens, mentis «խելք, միտք, կարծիք», moneo, ēre «հիշեցնել», իսլ. meina «մտածել», minne «հիշեցնել», muna «հիշել», meining «կարծիք, իմաստ», հանգլ. mænan «նշանակել, մտադրություն ունենալ», լատիշ. manīt «նկատել, զգալ», mīnet «հիշեցնել, կռահել», ռուս. МНЕНИЕ, ПО-МНИТЬ.

¹⁵ Collinder B. A Handbook of the Uralic Languages, Part 1, Fenno-Ugric Vocabulary, Hamburg, 1977.

Ֆ.-ու. ֆինն. *maine* «փառք, անուն», *mainita* «հիշեցնել», էստ. *mainima* «հիշեցնել», *manama* «կախարդել, թոփել», *manatark* «կախարդ», *manitsema* «հորդորել», *manitus* «հորդոր».

16. լավաշ /լօշ - Հ.-ե. գոթ. *hlaifs*, Հ.իսլ. *hleifr*, Հ. անգլ. *hlaf*, անգլ. *loaf*, ռուս. хлеб, սլովեն. *hleb*, «հաց», լատիշ. *klaips* «բրբռն», գերմ. *Laib* «ամբողջական հաց».

Ֆ.-ու. ֆինն. *leipa* «հաց», *leipoa* «թխել», *leipominen*, *leipomus* «թխում», *leipuri* «հացթուխ», *leivos* «թխվածք», էստ. *lei/b*, -*va* «հաց», (*leiva/tegemine* «հացաթխում», *leiva/ahi* «հացաթխման վառարան»).

17. լինել - Հ.-ե. շվեդ. *lar* (մոդ. բայ) «երևի, հավանաբար», լիտվ. *lai* «թող», լատիշ. *jel* “же” (Հմմտ. ռուս. *ли*).

Ֆ.-ու. ֆինն. *lienne* (*olla* ոժ. բայի սուպլ. ձև), էստ. *looja* «արարիչ, ստեղծող», *loomia* «ստեղծել», *loomine* «ստեղծում», *looming* «ստեղծագործություն», *loov* «ստեղծագործական», *loom* «բնավորություն, բնույթ», *loom* «կենդանի, գազան», հունգ. *lenni* «դառնալ, լինել, գոյություն ունենալ», *lénység* «էություն», *lény* «արարած», կոմի *ЛОВ [ЛОЛ-]* «հոգի, ոգի, կյանք, արարած», *ЛОВЗОН* «հարություն, վերածնունդ», *ЛОВЗЫНЫ* «հարություն առնել, վերածնվել», *ЛОНЫ* «լինել, պատահել, ծագել», *ЛООН* «առաջացում», ռուս. *ЛУЫНЫ* «լինել, դառնալ, պատահել», *ЛО* «հավանաբար, գուցե», *лэстись* «ստեղծող, կառուցող», *ЛУОНО* «հնարավոր է», *ЛУОН* «ապագա», *ЛУЛАНЫ* «շնչել», *лэся* «թերևս», էրզ. *лув* «հիմք, էություն», մար. *лнэш/лнях* «լինել», *лиеш* «կարելի է, թույլատրվում է», *лиедаш* «պատահել».

18. խառն/խառ «ոլորք»/խառան «պարան» (Սուհավայի բրրու. զարուռն «պարան»)- Հ.-ե. սանս. क़राण [karāṇa] «խառնածին», լիտվ. *kratynis* «խառնուրդ», դան. *kerne*, *kærne*, նորվ. *kjerne* «խնոցի», շվեդ. *kärna* «հարել (կարագր)», իսլ. *hræra* «խառնել», Հ. անգլ. *cyrne*, ն.անգլ. *churn* «խնոցի», Հ. անգլ. *cweorn* ն. անգլ. *quern* «/ձեռքի/ աղաց», Զահ. խառն/խուռն - հուն. *κερυννυμι* «խառնում եմ», [Հ.-ե. **k'ero-* «խառնել»], նաև խառ «ոլորք», ավեստ. *skarəna* «կլոր», հուն. *κυρτος* «ծուռ», [Հ.-ե. *(s)ker- «պտտել, ծռել»]¹⁶. (փաստորեն, ըստ Զահուկյանի այս արմատը կապվում է նաև կեռ/կոր արմատի հետ):

Ֆ.-ու. ֆինն. *harha* «մոլորություն, սխալ», *horjua* «տատանվել, ճոճվել», մար. *яраш* «խառնել, գլորել», *ярыш* «խառնուրդ», *ярлаш*, *яралташ* «խառնվել», հունգ. *kavarni* «խառնել, պտտել».

¹⁶ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 110:

19. **խարխափել** – ֆ.-ու. ֆինն. *haparoida, hapuilla, harou* «խարխափելով փնտրել», *harhailia* «թափառել», *harhauttua* «մոլորվել», *harhauttaa* «մոլորեցնել», *harha* «մոլորություն, սխալ»:

20. **Օխրխինջ** – հ.-ե. սանս. *hřesā* [hresā] «խրխինջ», հինգի *hinhināna* [hinhināna] «խրխնջալ», լատին. *hinnire* «խրխնջալ», հուն. *χρημετιζω* «խրխնջալ», իսլ. *hnegg, նորվ. knegg* «խրխինջ», շվեդ. *gnagga, հոլ. hinniken, հ. անգլ. hnægan, ն. անգլ. neigh, (ռուս. ржаты* արմատը առավել մոտ է սանսկրիտին)։

ֆ.-ու. ֆինն. *hirnua, հստ. hirnuma* «խրխնջալ», *hirnumine* «խրխինջ».

21. **խումբ/ բրբռ. քոմել/ +ամբ-ողջ/ +ամեն** – հ.-ե. լատին. *cum* «հետ, միասին», *cumulus* «կուլյտ», *cumulare* «կուտակել», նաև *communis*: Ըստ Ջազ. ա-կումբ «խումբ, ամբոխ», համբ «ժողով, ժողովուրդ», հուն. *κῶμος* «ամբոխ», [հ.-ե. *kem- «սեղմել»]¹⁷.

ֆ.-ու. ֆինն. *kumpi* «Հարց. դեր. երկուսից որը», *kumpikin* «օձ», *kunta* «Համայնք», հստ. *kim/p, -du* «կապ, կապոց, խուրձ», *kimps* «Հանգույց», *kum/b, -ma* «երկուսից որը», *kunibki* «երկուսն էլ, օձ», *jumala* «ամբողջովին, լիովին», էրդ. *КОМОРО* «մի բուռ, կապ».

22. **խօս/ +աս** (հ.-ե. *ag¹)/ խոյզ/ (հ)այց/ քուս «բամբասանք» – հ.-ե. լատին. *quaeso, ere* «փնտրել, խնդրել» (որից էլ *inquisitio* «հետաքննություն», *inquisitor* «հետախույզ, հետաքննիչ»), լատիշ. *aicināt* «կոչել, հրավիրել», լիտվ. *ieskas* «Հայց», *ieskoti* «փնտրել», ռուս. *иск* «Հայց», *искать* «փնտրել», *казать* «ասել, խոսել», *язык, իսլ. njosna* «հետախուզել», գոթ. *kausian, հ. անգլ. ceosan* «ընտրել», շվեդ. *aska* «պահանջել, խնդրել», անգլ. *ask* «Հարցնել», ավեստ. *hizvā, hizū* «լեզու», հ. լուվ. *asaza, սեպ.-լուվ. ašša-* «խոսել».

ֆ.-ու. ֆինն. *kysella* «Հարցնել», *kysyntä* «պահանջ, Հարցում», *kysemys* «Հարց», *käskä* «Հրամայել», *käski* «Հրաման», *haeskella* «փնտրել», *kosia* «Հարսնախոսել», *kosimine* «Հարսնախոսություն», *haastaa* «կանչել, կոչել», հստ. *küsima* «Հարցնել», *kusimus* «Հարց», *küsilema* «Հարցաքննել», *kaskima* «Հրամայել», *kask* «Հրաման, պատվիրան», (*kaskkiri* «Հրամանագիր»), *otsima* «փնտրել», *kosima* «Հարսնախոսել», *kosilane* «փեսացու», *kostma, kosta* «պատասխանել», *kostus* «պատասխան», *kostija* «իրավ. պատասխանող», կոմի *кӧсьыны* «ցանկանալ», *кӧсьом* «ցանկություն», *юасьны* «Հարցնել, խնդրել», *юасьом* «Հարցում», ռզմ. *юыны* «Հարցնել, խնդրել», *косыны* «խնդրել, պահանջել», *косем, косон* «խնդրանք», մար. *йодаш/ядаш* «Հարցնել, խնդրել», *йодмаш/йодыш* «Հարց», *кучащ* «պահանջել,

¹⁷ Նույն տեղում, էջ 119:

խնդրել», էրզ. кизефтемс «Հարցնել», անկատ. кизефнемс, кизефкс «Հարց», азомс «խոստանալ», մոկշ. азомс «ասել», azonдома «պատմություն, պատմվածք», հունգ. jós «գուշակ, մարգարե», խանտ. kasta «փնտրել», jastata, jasotta «ասել», jasəŋ «ասք, հինավուրց պատմություն».

23. Ծագ. - հ.-ե. խեթ. šak(k)uni- «աղբյուր».

Ֆ.-ու. ֆինն. suku «ցեղ, ծագում», sukunimi «ազգանուն», էստ. sigima «ծնվել, ծագել», sigimi/ne, -se «բազմացում», sigitama «բեղմնավորել», signema «առաջանալ, ծագել», sigitamine «բեղմնավորում», sigitus «—», sigiv «բեղուն», sugе «սաղմ», sugenema «առաջանալ, ծագել», sugenemine «առաջացում, ծագում», sugu «սեռ, տեսակ», sugulane «ազգական», sugulus «ցեղակցություն», sugutama «բեղմնավորում», tekkima «ծագել, ծնվել», tekkimine «ծագում», ուղմ. зег «տարեկան», մար. үкә «верховье пруда».

24. Ծակել/տէգ - հ.-ե. լատին. secō, āre «կտրում եմ, հատում եմ», հ.-բ. seh «խոփ», շվեդ. sag «սղոց», նորվ. sag «սղոց», saks «մկրատ», segl «կնիք», գերմ. Säge «սղոց», անգլ. saw «սղոց», լատիշ. zagis «սղոց», լիտվ. diegti «ծակել», լիտվ. dygti «ընձյուղներ արձակել», ռուս. дегна «վերքի սպի», секу, сечь: Հավանաբար, առնչվում է թակ արմատին (հմտ. տատանել/ծածանել/սասանել).

Ֆ.-ու. ֆինն. saha «սղոց», sahata «սղոցել», էստ. saag, sae «սղոց», saagima «սղոցել», saagimine «սղոցում», sagama «բրբռ. մանր կտրատել», sugama «բորվել», sākama «դակել».

25. Ծպուտ/ծպտել -

Ֆ.-ուգր. կոմի-պերմ. дзёбны «թաքցնել, թաղել» /բզմպ. дзебавны/, дзебалом «թաքցրած, թաքցնելը», дзебѹм «թաքստոց, դամբարան», ուղմ. зѹбныт «կամաց, հանգիստ», зѹбныи «սեղմել, ճնշել», зеп «գրպան», էրզ. сёномс «թաքցնել», сёнома «թաքցնելը», մոկշ. сёну «ծածուկ, գաղտնի», сёномс «թաքցնել», сёнф «գաղտնի».

26. Հազ¹ - հ.-ե. սանս. कास् [kās], հինդի खाँसी [kʰāsi] «Հազ», खाँसा [kʰāsnā] «Հազալ», շվեդ. hosta, նորվ. hoste, գերմ. Husten, անգլ. cough, ռուս. кашель, լիտվ. koseti «Հազալ», Զահ. Հազ - հ. հնդկ. [հ.-ե. *kʰās- «Հազալ»]¹⁸.

Ֆ.-ու. ֆինն. yska, էստ. koha, հունգ. köhögés, կոմի кызо́м, ուղմ. кызон, էրզ. коз, козома «Հազ», ֆինն. yskiä, հունգ. köhögni, կոմի кызыны, ուղմ. кызыныи, էրզ. козо́мс, էստ. kohima «Հազալ», ֆինն. köhä «(չոր) Հազ», köhiä «(չոր) Հազալ», սամ. gosä- «Հազալ», ըստ R. Կոլինդերի ուրալյան արմատ է՝

¹⁸ Նույն տեղում, էջ 106:

¹⁹ Collinder B., նշվ. աշխ.:

27. Հանգ «դադար»/հանգույց/⁺յանդ «վերջ», յանգչել/⁺անկ (> աննկուն) - Հ.-Ե. իսլ. hanki, hængur «խոչընդոտ, արգելք», hanga «կախված լինել», hengja[hæingja] «կախել», hniga [hi:ga] «ընկնել», hnignum «անկում», չվեդ. hanga «կախել», նորվ. henge «կախված լինել», Հ. անգլ. hangian, ն. անգլ. hang «կախել», Հ. անգլ. cwenken, ն. անգլ. quench «հանգցնել», գերմ. hängen «կախել», Hang «զառվալյր, լանջ», Հ.բ.գերմ. գոթ. hāhan «կախել» /=Հայ. կախել/, խեթ. hai(n)k-, hink-, hi(n)k- «նվիրել, առաջարկել, խոնարհվել», hengur/hengun «նվեր, ընծա», hinganu- «խոնարհեցնել», henkan «մահ, մահացու հիվանդություն», Ջահ. կախել - գոթ. Հ. բ. գերմ., hāhan «կախել», hangen «կախված լինել», խեթ. gank-/kank- «կախել», [Հ.-Ե. *k enk-, k onk «կախված լինել»]²⁰.

Ֆ.-ու. հստ. hang «պատառաքաղ», hanguma «սառչել», hing «հանգույց», մար. Йонлаш «ուշաթափվել», Йонгеж/Янгеж «աղեղ», Янгылаш «հոգնել».

28. Հանել - Հ.-Ե. սանս. հան [hāna] «անհետացում», հանի [hāni] «վնաս, նվազում», հուն. αἶνυμα «վերցնել, հանել», խեթ. hān-/han- «հանել /հեղուկներ/».

Ֆ.-ու. ֆինն. hankkia, հստ. hankima «արդյունահանել, ձեռք բերել».

29. Հատ/ հօտ/ յատ/ joht «կտրել»/ յատուկ «զատված»/ ⁺զատ/ զուտ/ կուտ - Հ.-Ե. սանս. ԽԷ [kʰal] «անջատել, կտրել», հա [hata] «սպանված», իսլ. hætta «վերջացնել, դադարեցնել», hveiti «ցորեն», նորվ. hvele «ցորեն», անգլ. wheat «ցորեն», լատիշ. kodols «միջուկ», зыдыти «սպանել», зүти «զոհվել, մահանալ», ռուս. ядро, խեթ. hatt-, hazziie/a- «ծակել, խոցել, հարվածել», hattanna-/hattanni- «փորագրել».

Ֆ.-ու. հունգ. szél «նիսդր, անջատմ. իմաստ», szélmenni «հեռանալ», szétesés «քայքայում, տրոհում», ֆինն. itu «ծիլ, սաղմ», կոմի ИД «գարի», ուզմ. УД «ծիլ», уданы «ծիլ», кидысь «հզվ. հացաւահատիկ», йыды «գարի», юдыны «փշրել, մանր կտրտել».

30. Հաւաք-ել - Հ.-Ե. լատին. habere, գերմ. haben, չվեդ. hava «ունենալ», իսլ. hafa «ունենալ, վերցնել», аҟа «ձեռք բերել, բռնել».

Ֆ.-ու. ֆին. haavia «հավաքել, բռնել ուսկանով, ցանցով», haavi «ուսկան», հստ. evima «ունենալ», hõivama «գրավել»:

31. Հիւս-Հ.-Ե. ռուս. уза, узел, узда, со-юз, юзень, уже «պարան».

²⁰ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 185:

Ֆ.-ու. Հունգ. ossz- «ընդհանուր», ossze- (=c, co), osszes- «ամբողջ», osszeirni «գրել միացած», մար. Эш «գուլգ, բնկեր», ушнаш «միանալ, միավորվել», ушаш «միացնել», ушем «միություն», ушык «կապ, հանգույց», ушымаш «միացում, ձուլում», ушланаш «միանալ, միավորվել».

32. Հոս - Հ.-ե. գերմ. gießen «թափել, լցնել, ձուլել, ջրել», իսլ. gjosa «ծայթթել, հոսել», նորվ. gisne «հոսել», gaus «հոսք, հոսանք», ose «ճառագայթել», øs «հեղեղ», ose «լցնել», ðsa «հեղեղ», հինդի कामार[kāsār] «լիճ, լճակ».

Ֆ.-ու. ֆինն. juosta «վազել, հոսել», kastella «թրջել, ջրել, ոռոգել», kostea «խոնավ», kosteus «խոնավություն», kostua «խոնավանալ», kostuttaa «խոնավացնել, թրջել», էստ. kos/k, -e, kose «ջրվեծ», Հունգ. eső «անձրև», озон «հոսք», կոմի КИСЬКАВНЫ, «լցնել, ջրել», КИССЬЫНЫ «լցվել, թափվել», кизьор «ջրիկ», ուզմ. КИСЬКЫНЫ «լցվել, թափվել», КИСЬКАНЫ «լցնել, ջրել», кизер «ջրիկ». КЫЗЬ «մեղ», մանս. ёсунжкве «թրջել», ёсунжкве «թրջվել», նաև Հայերեն գող - ֆինն., էստ. kusi «մեղ», կոմի кудз «մեղ», кудзавны «միգել», ըստ Բ. Կոլինդերի, ուրալյան արմատ է²¹.

33. Ճայն - Հ.-ե. լատին. sonus «հնչյուն, ձայն», sono, òre «հնչել, նվագել», tono, òre «որոտալ», tonus «հնչյուն», սանս. धन[d'an], «հնչել», լատիշ. dainot «երգել», լիտվ. daina «երգ», dainuoti «երգել», իսլ. dýnur «աղմուկ», syngja «երգել», չվեդ. dāna «աղմկել», sjunga «երգել», sang «երգ», նորվ. don «աղմուկ», sang «երգ»: Մ. Ֆասմերը ուռս. ЗВОН արմատին է կցում Հայ. ձայն, լատին. sonus, հ.հնգլ. svanas «հնչյուն», svanati «հնչել», լիտվ. žvengti «խրխնջալ», žvangeti «հնչել, զողանջել», որպես Հ.-ե. նախածև բերում է * svonos²².

Ֆ.-ու. ֆինն. sana «բառ», sanakirja «բառարան», sanella «թելադրել», sanoa «ասել», sointi «զողանջ», sointua «հնչել», էստ. sõna «բառ», sõnama «ասել, խոսել», Հունգ. zene «երաժշտություն», zengeni «զնգալ, խուլ հնչել».

34. ման/ման գալ մանել/ մանեակ - Հ.-ե. իսլ. muna «տարբերվել, չարժվել», munir «տարբերություն», men «մանյակ», հ.անգլ. mene «վզնոց, դարդ», լիտվ. mainyti «փոխել», ուռս. менять «փոխել».

Ֆ.-ու. ֆինն. menna «գնալ, երթալ, անցնել», meno «երթ, չարժում», mennyt «անցյալ», menettää «կորցնել, զրկվել», menetyš

²¹ Collinder B., Նշվ. աշխ.

²² Фасмер М. Этимологический словарь русского языка, т. 2, М., 1967.

«կորուստ, զրկանք», էստ. *minema* «գնալ», *minetama* «կորցնել», *minev* «անցյալ, անցած», հունգ. *menni* «գնալ», *menet* «երթալը, ходьба», կոմի *мунны* «գնալ, անցնել, հեռանալ», *мунавны* «գնալ», ուզմ. *мыныны* «գնալ, հետևել», *мыныны-ветлыны* «ծանապարհորդել», էրզ. *мендемс* «թեքել, ծռել», *менчемс* «ծալել», *менчезь* «ծալված», մոկշ. *мяндемс* «ծալել»: Արմատի երկու իմաստներն էլ, որոնք մեկը մյուսից են բխում, կան հայերենում «պտույտ, ոլորք» և «բայլել, շրջել».

35. մրմուռ / մուռ – ֆ.-ու.՝ ֆինն. *maruna* «օշինդր», *murhe* «վիշտ, ցավ», էստ. *mure* «վիշտ, հոգս, տազնապ» (*murest* «վշտից», *murest murtud* «վշտաբեկ, բառացի՝ վշտից սպանված»), *mõru* «դառը, կծու», *mõrudus* «գառնություն», *mür/k, -gi* «թուլն», *müre* «թթված», հունգ. *maro* «կծու, այրող, едкий».

36. նայել – հ.-ե. լեզուներից միայն սանս. *नयन* [*nayana*] «աչք». ֆ.-ու.՝ ֆինն. *nahda* «տեսնել», *näkemiin* «ցտեսություն», *näkeminen* «видение, տեսողություն», *nako* «տեսողություն», *näkyä* «երևալ», *näytellä* «ցույց տալ, պատկերել», *näes* «видишь ли», *naet* «видите ли», էստ. *nägeta, näha* «տեսնել», *näha olema* «երևալ», *nägemine* «տեսողություն», *nägu, näo* «դեմք, կերպարանք», *näi/de, -le* «օրինակ», *naikse* «թվում է, երևում է», *naiv, nailik* «թվացող», *naitama, naidata* «ցույց տալ», *naitamine* «ցուցադրում», *naitus* «ցուցահանդես», հունգ. *nézni* «նայել», *nézet* «հայացք, կարծիք», կոմի-պերմ. *не́джжэвны* «զննել, դիտել», *не́джжэсалём* «զննում, դիտում», ուզմ. *наяны* «համը տեսնել», էրզ. *неемс* «տեսնել», *неявомс* «երևալ, թվալ», մոկշ. *няеви* «երևում է», *няемс* «տեսնել, նկատել», *няевомс* «երևալ», *няи* «ականատես», *няфтемс* «ցույց տալ», *няевикс* «ակնհայտ», *афняевикс* «աննկատելի», *няк* «մասն. տեսնում ես, видишь».

37. շար – հ.-ե.՝ սանս. *श्रेणि* [*ṣreṇi*] «շարք, զիծ, դաս», խեթ. *šarran-, šarra-* «ամբողջի կեսը, ամբողջի մասը, բաժանում», Զահ. շար, շարք, բեռուկ «շարել, միացնել», հ. հնդկ. *sarat-* «թել», լատին. *serō, -ere* «հյուսել, կապել», *series* «շարք, շղթա», [հ.-ե. * *ser-* «շարել»]²³.

ֆ.-ու.՝ ֆինն. *sarana* «ծխնի (դռան)», *sarake* «սյունակ», *sarja* «շարք, հավաքածու, դաս, խումբ», *sarka* «1. շերտ, հատված, հողակտոր, 2. կոպիտ կտավ», հունգ. *sor* «շարք», *sorállás* «հերթ», *sorolni* «թվարկել», *soros* «բաղկացած X շարքերից».

²³ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 252:

38. շերտ - Հ.-Ե. լատիշ. *škira* «գաս, տեսակ», *širt* «բաժանել, անջատել», ԶաՀ. շերտ - քերեմ, քերծեմ, կարճ - Հ.բ.գ. *scherze, scurz* «կարճ», լիտվ. *karta* «շերտ», լատիշ. *kārta* «շերտ, կարգ», [Հ.-Ե. **(s)ker-* «կոտրել»]²⁴.

Ֆինն. *kerta* «անգամ, շերտ», *kerros* «շերտ, հարկ», ուղմ. *шертны* «տեսակավորել», *шертон* «տեսակավորում», Հունգ. *serteni* «վիրավորել».

39. չիբ - Հ.-Ե. ռուս. *щавель* «թրթնջուկ», *жупел* «ծծումք» < Հ.բ.գ. *swēbal, swēfal* «ծծումք», լատին. *sāpo, ōnis* «ոճառ», անգլ. *sour* «թթու», իսթ. *šiuī-/šiuai-* «ածկ. թթու».

Ֆ.-ու. Ֆինն. *haran* «ածկ. թթու», *harpo* «գոյ. թթու», *harata* «թթվել», *harpi* «թթվածին», էստ. *hape* «գոյ. թթու», *haru* «ածկ. թթու», *harnema* «թթվել», *harnik* «թթվածին», Հունգ. *savó* «չիճուկ», էրգ. *сэпей* «կծու», մոկշ. *шапама* «թթու, կծու», *шапамомс* «թթվել».

40. չպրտել -

Ֆ.-ու. կոմի *шыбитны* «նետել», *шыбитан* «ոչ պիտանի(իր)», *шыбитом* «նետում», *шыбитчыны* «նետվել», ուղմ. *шепертыны* «չուել, տարածել», էրգ. *сявордомс* «տապալել», *сяворемс* «տապալվել», *сявортнемс* «անկտ. տապալել», մոկշ. *сявардемс, сявардевомс* «տապալել», *шимордемс* «գլորել», մար. *савыраш* «չրջել», *савыр-наш* «(վերա)դառնալ».

41. շուռ /շուրջ- Հ.-Ե. լատին. *circum, circa* «շուրջ», *circus* «շրջան», չվեդ. *sarg* «եզր, շրջանակ», ռուս. *серьга, шар, ԶաՀ. ավեստ. scarana*, «կլոր», ռուս. *крутить*, [Հ.-Ե. **(s)ker-* «պտտել, թեքել»]²⁵.

Ֆ.-ու. Ֆինն. *saarroos* «շրջակայք», *saarlaa* «շրջապատել», *sortau* «տապալել, կործանել», *sortua* «քանդվել», էստ. *sõõr* «շրջան», ուղմ. *шир* «արագ պտույտ», *шоры* «գրտնակ», *чирь* «ծուռ, կեռ», *чирьке* «աղեղ», էրգ. *суркс* «մատանի», մոկշ. *шарома* «պտույտ», *шаромс* «շրջվել», *шары* «անիվ», *ширем* «թեք, շեղ», մար. *шõрын* «շեղ, թեք», *шырча, шер* «ուլունք», *шергаш* «кольцо», *шорга* «հանգույց», *шорлаш* «պտուտակը թուլանալ, լարից ընկնել».

42. ոլոր/ողն/ուլն/ող, նաև հոլ - Հ.-Ե. լատին. *volvo, ere* «գլոր(վ)ել, պտտել», լատիշ. *velt* «գլորել», *valgs* «պարան», *velve* «կամար», *vilciņš* «հոլ», լիտվ. *viela* «լար», *vilnis* «ալիք», իսլ. *bolti* «գնդակ, պտուտակ, bēlti «գոտի», *velta* «գլորել, գլորվել», չվեդ.

²⁴ Նույն տեղում, էջ 261:

²⁵ Նույն տեղում, էջ 263:

valv «կամար», vilse «մոլորվել», հ.բ.գ. fleohtan «հյուսել», նորվ. flette «հյուսել», velte «շրջել», ðile «ոլորվել, ծռվել», հուն. πλεκτι «պարան», ռուս. вал, волна, волочить, плету, плести. ԶաՀ. ոլորք, ոլոռն, բոլոր, գալար [հ.-ե. *uel- «պտտել»]. Զահուկյանը ենթադրում է, որ հայ. olor ձևը առաջացել է յ-ի անկումով²⁶.

Ֆ.-ու. ֆինն. palata «վերադառնալ», palauttaa «վերադարձնել», paulu «վերադարձ», paula «պարան», vaeltaa «թափառել, ճամփորդել», vältää «շրջանցել, խուսափել», էստ. vältima «խուսափել», viltu «թեք, շեղ», էրզ. велявнемс «անկտ. շրջել, պտտել», велявтомс «կտր. շրջել, դարձնել», կոմի подос «ծուռ, շեղ», հունգ. palánk «ցանկապատ» fal «պատ».

43. ոսկի - հ.-ե. սանս. 𐌵𐌹 [vas] «շողալ, փայլել», լատին. aes, aeris «պղինձ, բրոնզ», լիտվ. auksas «ոսկի».

Ֆ.-ու. ֆինն. vaski «պղինձ» էստ. vas/k, -e «պղինձ», vaskne, vase «պղնձե», հունգ. vas «երկաթ», vasgyár «մետալուրգ. գործն», կոմի ЭВЫСЬ «արծաթ», ОЗЫСЬ «անաղ» (արմատն է -ЫСЬ), ուղմուրտ. азвесь «արծաթ», үзвесь «անաղ, կապար» (արմատն է -весь), մանս. aatwōs, alfs «անաղ, կապար»: Հստ Բ. Կոլինգերի, ուրալյան արմատ է և տարբեր լեզուներում (սամոդիական) ունի նաև jeese, wese, basa, bese, kəəzy, kulsə (Համտ. սոլմեր. guški/n/ «ոսկի») ձևերը, որոնք բոլորը նշանակում են «երկաթ» կամ «մետաղ»²⁷.

44. ոստայն - հ.-ե. вѣжу, вѣзати, вѣзь, բուլղ. вѣже «պարան», իսլ. festi «պարան, շղթա», ֆինն. vasu «զամբյուղ» (միեննոլյն արմատից են՝ գէս, հիւս և ոստայն).

45. որջ -

Ֆ.-ու. էստ. ur/g, -u, uru «որջ», urka, ur/gas, -ka «հետնախորշ, որջ /գողերի/», urgitsema «փորել», մար. раж, рож «անցք, որջ».

46. սեպ - հ.-ե. իսլ. sepi «կտոր, պատառիկ», լատին. separatum «անջատ», իտալ. separare «բաժանել, անջատել», ԶաՀ. հհնդկ. s'epu «պոչ», լատին. cippus «բրգաձև սյուն», ալբ. thep «սրածայր ժայռ», «անկյուն» [հ.-ե. *k'eipo-, *k'oipo-]²⁸.

Ֆ.-ու. ֆինն. sepalus «ճեղք, պատվածք», sepeli «խիճ», seppo, seppä «դարբին», sepanpaja «դարբնոց», էստ. seppi «դարբին» /նախն. իմաստը՝ «կոփել, խփել, ճեղքել».

47. տապան/տուփ - հ.-ե. խեթ. ištarp-/ištapp- «խցանել, արգելափակել, պաշարել», ištappinu- «փակել, շրջափակել», ռուս. дупло

²⁶ Նույն տեղում, էջ 269:

²⁷ Collinder B., նշվ. աշխ.:

²⁸ Джаукян Г., նշվ. աշխ., էջ 150:

եկդ. սլավ. *дупль* «դատարկ, սնամեջ»: ԶաՀ. Հիսլ. *staur*, Հ.բ.գ. *stouf* «գլաված», Հ.անգլ. *slēap* «գլաված», *stoppa* «դուլլ», [Հ.-Ե. *](s)leup- «խփել, հրել»²⁹.

Ֆ.-ռւ. ֆինն. *tupa* «խրճիթ», *tuppi* «պատյան», էստ. *tup/p,-e* «պատյան, բար. ծաղկաբաժակ», *tuppa* «դեպի սենյակ», կոմի *тобны* «փաթածել», *тубрас* «փաթածել».

48. տանել/տար (տարակոյս, տարտամ) – Հ.-Ե. սանս. *धन* [*d'ana*] «շահուժ, շահույթ, նվեր, Հարստություն», *धारा* [*d'arana*] «պարունակող», *धरा* [*d'ara*] «պահող, կրող», *तन* [*tan*] «ձգել, տարածել», *तर* [*tar*] «տեղափոխել, անցկացնել», *तरि* [*tari*] «նավակ, նավ», լատին. *teneo*, *ēre* «պահել», *tendo*, *ere* «ձգել», լիտվ. *tempti* «ձգել», իսլ. *þenja* «ձգել», *tjon* «կորուստ, վնաս, մահ», շվեդ. *tjana* «ծառայել», *tjanare* «ծառա», *dana* «ուշաթափվել», նորվ. *dra* «ձգել, քաշել», *tjon* «տաժանակիր աշխատանք», *tonne* «տակառ», Հ. անգլ. «քաշել, քարշ տալ, թիավարել, գրավել» (կատար. կերպ *togen*, տե՛ս *թոկ*), ռուս. *тянуть*, *тянуть*, *тянуть*: ԶաՀ. տանիմ (աոր. տարայ) – Հ. Հնդկ. *tanōti* «ձգում է, տարածում է», *tarati* «անցկացնում է», Հուն. *τανω* «ձգում է, տարածում է», ավեստ. *tar-* «անցնել մյուս կողմը», օս. *tārin* «քշել» [Հ.-Ե. * *ten-* «ձգել», *ter-* «տանել, տեղափոխել, անցնել»]³⁰.

Ֆ.-ռւ. տանել – ֆինն. *tuoni* «մահ», *tuonne* «ղեպի այնտեղ», *tuonti* «ըրերում, ներմուծում», էստ. *taandama* «հեռացնել», *taanduma* «հեռանալ», տար – ֆինն. *tarioilla* «մատուցել», *tarjotin* «սկստեղ», էստ. *tara* «ցանկապատ», *tarastama* «ցանկապատել», *toru* «փող, խողովակ», *taaruma* «ճոճվել», կոմի *торны* /*тородны* «տեղափոխվել», ռւս. *тыр* «լի, լցված», *тыро* «լիքը», *тырмытыны* «լցնել», *тырмыны* «լցվել», *тырыны* «տեղափոխվել», *тырытыны* «տեղափոխել», էրզ. *таргамс* «(դուրս) հանել», մար. *тарам* «հեռացնել», *тарванам* «տեղից շարժվել», *тарватам* «տեղից շարժել», *тора* «հեռու», *торанам* «հեռանալ», *торам* «հեռացնել, անջատել», *тыркаам* «տանել, դիմանալ», *торка* «տարածված, փռված», *торкалаам* «տարածել, միմյանցից հեռացնել», *торлаам* «միմյանցից հեռանալ», *мер/мур* «սահնակ», Հունգ. *tárolni* «պաշար ունենալ, ամբարել», *tartani* «պարունակել», *tartalom* «բովանդակություն», *ter* «տարածություն, դաշտ», *teriedni* «տարածվել».

²⁹ Նույն տեղում, էջ 136:

³⁰ Նույն տեղում, էջ 133:

49. տաք - հ.-հ. իսլ. *dogun* «արևածագ», *dagur* «օր», *steikja* «տապակել», շվեդ. *steka* «տապակել», *dag* «օր», գերմ. *Tag* «օր», սանս. *Ṭṣ[daḥ]* «վառել», լիտվ. *degutas*, ռուս. *dezoomb*, հ. չեխ. *dehet* «կուպր, ձյութ», լատիշ. *degt* «վառվել, վառել», *deglis* «պատրույգ», լիտվ. *degti* «վառել, վառվել», *dagus* «վառելիք», *degtas* «պատրույգ».

Ֆ.-ռւ. ֆինն. *takka* «բուխարի, օջախ», էստ. *tah/t*, -i «պատրույգ», *tah/t*, -e «աստղ».

50. քալլ - հ.-հ. սանս. कल [kal] «տանել, նետել, հետքերով գնալ, հետապնդել», खल [k'al] «շարժել», हल [hal] «գնալ», चल [cal] «շարժվել», լատին. *scālae* «սանդուղք», լիտվ. *keliauti* «ճամփորդել», լատիշ. *celot* «ճամփորդել», ռուս. *гулять*.

Ֆ.-ռւ. ֆինն. *askel* «քալլ», *kulkea* «քալլել, դնալ», *kulki* «երթ, շարժում», *kuljettaa* «վարել, տանել», *kuljeksia* «թափառել», էստ. *kai/k*, -gu «xod», *kaima*, *kaia* «xodumь» (*kaies mars* «քալլով մարշ»), *kaimine* «քալլելը, քալլք», *kolima* «գաղթել, քոչել», *kolimine* «գաղթ, վերաբնակվելը», *hulkuma* «թափառել», *jalg* «ոտք», *jalutama* «քալլել, գրոսնել», *jala* «ոտքով», *jalats* «կոշիկ», *jäl/g*, -je «հետք», *jalgima* «հետևել», հունգ. *gyalog* «ոտքով», *haladni* «գնալ, շարժվել», *haladás* «շարժում», ուկրմ. *калэ; калэ* *вуыны* «մոտենալ, հասնել», *калгыны* «քալլել, թափառել», *калгись* «թափառաշրջիկ», էրզ. *икеле* «առջևում, նախկինում, կապ առաջ», *икелев* «դեպի առաջ», *икелен* «ապագա, նախորդ, նախկին», *эскелькс* «քալլ», *эскелямс* «քալլել», *эскелястомс* «քալլեցնել», մոկշ. *кялемс* «անցնել, գնալ (ջրի, ձյան միջով)», պոմռ. *кялевомс, кяльфтемс, асколькс* «քալլ», *асколямс* «անկտ. քալլել» *аскольдамс* «կտր. քալլել», մար. *каям* «գնալ, շարժվել», *келаш/клаш* «քալլել (ջրի, ցեխի միջով)», *ашкыл/ошкыл* «քալլ», *ашкылытыш* «քալլ, քալլվածք, քալլել», *йол* «ոտք», *йолын* «ոտքով», *йоллаш* «հետևել», ըստ Բ. Գոլինդերի, ուրալյան արմատ է³¹:

Այսպիսով, հայերենի հետնալեզվային շարքի բաղաձայնների դիմաց տյլ լեզուներում ևս այդ շարքի բաղաձայններ են: Օ բաղաձայնի դեպքում, երբ բառն սկսվում է ձայնավորով, երբեմն առկա է այդ ձայնավորի անկում (խեթ. *henkan* > *nakkuš*, հուն. *νεкус* «դիակ», հայ. արեգ, խեթ. *harki-/hargai-* > հունգ. *reggel* և այլն): Ատամնային բաղաձայնների հերթագայութունը դիտարկելի է հայերենի դ, տ, թ, ձ, ծ, ս բաղաձայնների դեպքում:

³¹ Collinder B., նշվ. աշխ.

Բառարմատների քննությունը ցույց է տալիս, որ ծագումնաբանորեն նույնական զուգահեռ ձևերը Հայտնաբերելու համար համեմատաբանության մեջ ընդունված բաղաձայնների «կանոնավոր» համապատասխանությունների աղյուսակներով առաջնորդվելը նախընտրելի է, քանի որ արմատները ծագումնաբանական փնջերով դիտարկելիս պարզ է դառնում, որ այդ սկզբունքը, հատկապես Հ.-Ե. լեզվաբնույթից դուրս, կիրառելի է:

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ АРМЯНСКИХ КОРНЕЙ НЕИЗВЕСТНОГО ПРОИСХОЖДЕНИЯ

НИКОГОСЯН Г. В.

Резюме

Сравнительный анализ множества армянских корней показывает, что основным принципом для выявления этимологических связей армянских корней неизвестного происхождения является сравнение вышеназванных корней с параллельными словоформами из других языков ностратической макросемьи, а также из других индоевропейских языков. Общепринятый в сравнительном языкознании метод сравнения корней по таблицам «регулярных» звуковых соответствий и звуковых законов не дает ожидаемых результатов. Изучение почти 50 корней неизвестного происхождения, имеющих параллели в других индоевропейских и финноугорских языках, выявляет множество параллельных форм, ранее не замеченных исследователями, которые собраны в так называемые этимологические пучки по принципу чередования согласных.

Анализ корней проводился с учетом некоторых закономерностей, выявленных исследователями ностратической языковой макросемьи, в частности, отсутствие гласных звуков и скопления согласных в начале любого корня в ностратическом праязыке, что характерно для большинства индоевропейских языков. Таким образом число корней неизвестного происхождения в армянском языке не так велико, как предполагалось ранее.

**ETYMOLOGICAL ANALYSIS OF THE ARMENIAN
ROOTS OF UNKNOWN ORIGIN**

G. NIKOGHOSYAN**Abstract**

The comparative analysis of a series of Armenian roots shows that the main principle for finding out the etymological ties of the Armenian roots of unknown origin is their comparison with parallel word forms from the languages of the Nostratic macrofamily, as well as from other Indo-European languages. It is noted that the widely accepted method in comparative linguistics to compare roots according to tables of "regular" sound correspondences and sound laws can not give the anticipated results. About 50 roots of unknown origin which have parallels in other Indo-European and Fenno-Ugric languages have been studied. A great many parallel forms, unnoticed by scholars before, have been found out and grouped into etymological bunches according to the principle of consonant alternation.

While analyzing the roots some regularities discovered by scholars studying the Nostratic macrofamily have been studied, particularly the absence of vowel sounds and consonant clusters in word initial position in the Nostratic protolanguage, which is characteristic of most Indo-European languages. Thus, it is possible to state that the number of roots of the unknown origin in the Armenian language is much smaller than it was supposed before.